

## ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԷՋԵՐՈՒԽ

«Բազմավեպը» հայկական պարբերական մամուլի նահապետն է: Այն լինելով հայկական իրականութեան հայելին, տարբեր ժամանակներում հրատարակուել է տարբեր յաճախականութեամբ:

1843ի Յունուարից սկսեալ հրատարակուած բազմահարիւր համարներում կան նաեւ միջազգային եւ հայկական ճարտարապետութեան նիւթեր, որոնցից այս հաղորդման մէջ կիզակէտում կը վերցուեն հայկական ճարտարապետութեան վերաբերողները: Իրօք հայկական ճարտարապետութեան պատմութեան ուսումնասիրութեան կայացումը հէնց «Բազմավեպ»ի տարիքն ունի եւ պարբերականում տպագրուած յօդուածները իրենց մասնակցութեան դերն ունեն: Թէ հայկական ճարտարապետութեան պատմութեան հիմնադիր Թորոս Թորոսմանեանը, եւ թէ հայկական ճարտարապետութեան պատմութեան դասագրքի հեղինակ ակադեմիկոս Վարազդատ Յարութիւնեանը, ինչպէս նաեւ հայկական ճարտարապետութեան պատմութեան հանրագիտարանատիպ երկհատորեակի հեղինակ Փառլոյ Գունէոն ու հեղինակակիցները, եւ ընթացիկ «Հայկական նարտարապետութեան ընդհանուր պատմութեան» վեցհատորեակում ներդրուած բազմաթիւ մասնագէտների գործերը նաեւ փոխադարձաբար մնուեցին «Բազմավեպ»ի մասնականութիւնը: Ներկայացուող հաղորդման նպատակը «Բազմավեպ»ի 175 տարիներում հրատարակուած ճարտարապետական նիւթերի նշանակութեան ամրագրումն է:

Գիտական խնդիրներ են՝ հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութեան նույիրուած յօդուածների վերաքաղն ու համակարգումը, որպէս հայկական ճարտարապետութեան տեսութեան բաղկացուցիչ եւ լրացուցիչ մաս: Արդարեւ, ինչպէս միջազգային ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը, այդպէս էլ հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութիւնը իր ակունքներն ունեցաւ՝ մատենագրութեան էջերից դէպի ճանապար-

Հորդական հետազօտութիւններն ու տեղագրութիւնները, ԺԹ. դարի ճարտարապետութեան պատմութեան եւ տեսութեան գիտականացման նոր զարգացումները, ինչպէս նաեւ անցումը դէպի արդի ճարտարապետութեան մտածողութեանը։ Բնականաբար, ներկայացուած զարգացման մէջ իրենց դերն ու նշանակութիւնը ունեցան նաեւ «Բազմավիպ»ի էջերում տպագրուած եւ ստորեւ ներկայացուող յօդուածները։

«Բազմավիպ»ը ունեցաւ իր ազգային քաղաքականութիւնը, այն ոչ միայն հայկական միջավայրին իրազեկեց միջազգային իրականութեան տեղեկատուութեանը, այլ նաեւ հայկական ճարտարապետութեան իրաքանչիւր բնագաւառում ստեղծեց ուսկիրաներ, որոնք կառուցողաբար մասնակցեցին հայկական ճարտարապետութեան գիտութեան կայացմանը։ Սա հետեւողաբար իր հետագիծը ունեցաւ ստորեւ ներկայացուող՝ տեղագրական նիւթերից դէպի ճարտարապետութեան բննական վերլուծութիւնը, տեսութեան եւ պատմութեան հարցերը եւ այլն։

## ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

«Բազմավիպ»ում հրատարակուած ուսումնասիրութիւնների առաջնեկը հայկական բնակալարերի տեղագրութիւնն է, որ իր մրցակիցը չունեցաւ հայկական մշակոյթի անդաստանում։ Այն համաշխարհային ճանապարհորդական գրականութիւնից շիթ առ շիթ քաղուեց եւ կոթողային ձեւով յառնեց հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութիւնների շեմին։ «Բազմավիպ»ի էջերում հրատարակուած բազմաթիւ տեղագրուների մէջ բնագալարը գլխաւորեցին Հ. Ղեւոնդ Ալիշանը, Հ. Ներսէս Սարգիսեանը, Հ. Մուքիս Էփրիկեանը եւ շատ ուրիշներ։ Նրանց գործերը «Բազմավիպ»ում մաս առ մաս հրատարակուեցին յօդուածաշարերի ձեւով եւ յետոյ վերածուեցին հատորների։ Տեղագրական աշխատութիւնների առումով «Բազմավիպ»ում եղած հնագոյն հրատարակութիւնը 1846 եւ 1847 թուերից է, որ գրուած է Հ. Ղ. Ալիշանի կողմից եւ վերաբերում է անկրկնելի մայրաքաղաք Անիին։<sup>1</sup>

Այսօր հայագիտական կոթողներ են Հ. Ղ. Ալիշանի տեղագրական բազմաթիւ հատորները։ «Նշմարք Հայկականի» գիրքը<sup>2</sup> Հայ-

1 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Ամի, «Բազմավիպ» 1846, էջ 324-326։ Նոյն, Ամի Քաղաքին աւերակները, «Բազմավիպ» 1847, էջ 5-11։

2 Գիրքը՝ հրատարակուել է Վենետիկ, 1870։ Այնուհետև բարգմանուել է ֆրանսերէն (1872), ամգլերէն (1875) եւ գերմաներէն (1893)։

կական լեռնաշխարհի ներկայացումն է: Այն միջնադարեան ցամաքային մայրուղիներով կատարուած մտացածին ճանապահորդութիւն է, որ սկսելով Վոսփորի ափերից աւարտում է Այրաբատի՝ Շիրակ գաւառի տարածքներում<sup>3</sup>:

«Տեղագրութիւն Հայոց Մեծացը» (1855)<sup>4</sup>, Հ. Չ. Ալիշանի յետագայ տեղագրութիւնների հիմնաքարն է: Բազմաթիւ են մեծ գիտնականի Հայաստանի նահանգներին նուիրուած հաստափոր հատորները, որոնք մինչեւ գիրք դառնալը հրատարակուել են «Բազմավէպ»ի «Հայկական տեղագրական» շարքում, որպէս՝ Սիսական<sup>5</sup>, Սիսուան<sup>6</sup>, Նախիջևան<sup>7</sup>, Արցախ<sup>8</sup>, Ծոփք<sup>9</sup>, Աղուանք<sup>10</sup> նահանգներին նուիրուած յօդուածներ:

Հ. Չ. Ալիշանի հրատարակութիւններից յետոյ, առանձնապէս մեծ գործ է Հ. Ներսէս Սարգիսեանի «Ճանապարհորդութիւն

<sup>3</sup> Հայր Ղեւոնդ Ալիշանի «Նշմարք եւ նշխարք ի Հայաստանի» յօդուածաշարը մինչեւ 1870 որպէս գիրք հրապարակումը, սկզբում 24 մասերով լոյս է տեսել «Բազմավէպում»: Աշխատութեան նախապարհագիծը ընդգրկում է Վոսփորից դեպի Սեւ ծովի յունական ափերը, Փոքր Ասիա եւ Միջերկրականի ափերը եւ Աերառում է հետեւեալ բնակավայրերն ու մայրուղիները՝ Սինով, Տրապիզոն, Տրապիզոնից դեպի Էրզրում կամ Կարին, Գիւմուշհանէ, Բարերդ, Վարզուհան, Բարերդից՝ Կարին, Հազարակն, Կարմոյ դաշտ, Կարմոյ գաւառ կամ Բարձր Հայք, Արծն, Կարին, Կարինից՝ Բասեն, Հասանեալա, Յովիանավանք կամ Սակիզում, Հովուի կամուրջ կամ Ջովան Կեռպիրիսու, Աւենիկ, Խշոն կամ Խշոս, Սոտրին Բասեն կամ Մժնկերտ, Կարս, Կարսից մինչեւ Արփայ գետ կամ Արփաչայ եւ այլն:

<sup>4</sup> «Տեղագրութիւն Հայոց Մեծաց» յօդուածաշարը տպագրուած է «Բազմավէպի» 1864 եւ 1865 համարներում: Փակագծերում նշուած բնակավայրերի համար տե՛ս համեստի հետեւեալ էջերը՝ 1864, 9-11 (Բարերդ, Վարզուհան), 56-61 եւ 90-95 (Կարմոյ Քաղաք), 152-160 (Թորթում), 187-192 (Թորթում) եւ մաս գաւառի Թաւումիկարա), 219-224 (Բասեն, Հասանեալա, Կարս), 249-256, 280-287, 315-319, 377-382, ինչպէս նաև 1865, 26-32, 58-65, 119-125 (Անի Քաղաք եւ յուշարձանները):

<sup>5</sup> Սիսական կամ տեղագրութիւն Միւնեաց Աշխարհին, «Բազմավէպ», 1891, 321-336:

<sup>6</sup> Սիսուան, «Բազմավէպ», 1885, 289-405:

<sup>7</sup> Սոորագրութիւն Նախիջևանու, «Բազմավէպ», 1892, 15-26, 157-164, 220-222, 261-271, 278-290, 409-412, 436-344, 533-544:

<sup>8</sup> Արցախ, «Բազմավէպ», 1988, 228-277; 1989, 186-221: Ուտի, «Բազմավէպ», 1990, 73-101, 346-366 եւ 1992, 163-202:

<sup>9</sup> Ծոփք, «Բազմավէպ», 1993, 101-122 եւ այլն:

<sup>10</sup> Աղուանք, «Բազմավէպ» 1972, 343-357, 509-518:

ի Փոքր եւ ի Մեծ Հայոց, որ մինչեւ ամբողջական հրատարակութիւնը մաս առ մաս հրատարակուել է «Բազմավէպ»ում<sup>11</sup>:

Միւս ուշագրաւ տեղագրական աշխատութիւնը Ատրպետի հեղինակած՝ Սեւ ծովից մինչեւ Կարին՝ ոլոր մոլոր հոսող Խոտորդուրդի տեղագրութիւնն է<sup>12</sup>:

Հայկական իրականութեան մեծ անուններից է Հ. Սուքիաս էփրիկեանի բնաշխարհիկ բառարանը: Գնայած, որ այն միայն երկու հատորների մասով է հրատարակուել եւ ընդգրկում է մինչեւ «Կ» տառը, հայագիտական ամենայաճախ օգտագործուող գրքեւրից է: Պատկերազարդ բառարանը նոյնպէս իր որոշ տեղանուններով սկզբում արտացոլուած է «Բազմավէպ»ի էջերում<sup>13</sup>:

Նոյն պէտք է ասել Հենրի Լինչի Հայաստանով կատարուած ճանապարհորդութեան երկչատորեակի հայերէն թարգմանութեան հատընտիր հրատարակուած նկարագրականների մասին<sup>14</sup>: Այս եւ այլ հատորների լուսեղին ճամփով է, որ կերտուեցին բազմաթիւ հայագիտական ուսումնասիրութիւններ, որոնցից շարունակաբար «Բազմավէպ»ում ուլունքների շարքի նման հրատարակուեցին բազմաթիւ տարածքների փաստագրումները, ինչպէս՝ Ն. Մառի «Անի, Հին Հայաստանի մայրաքաղաք»ին նուիրւած յօ-

- 11 ՍԱՐԳԻՍԵԱՆ, Հ. Ն., *Տեղագրութիւնն ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ 1864. այն մինչեւ որպէս գիրք լոյս տեսմելը, 1863ին հետեւեալ պրակմերով հրատարակուել է «Բազմավէպ»ում՝ Զմիւռնիա, 6-15 եւ 42-45. Յայտուրութ եւ Եփեսոս, 92-95. Պրուսա, 104-109 եւ 161-167, Կեմիեյիկ եւ դէպի Նիկիա, 193-198. Նիկիա, Նիկոմեդիա, Արմաշ, 225-230. Ատապազար, Պիկեթիք, Քէօթահիա, 261-266. Քէօթահիա, Զավտոր, Էսկի-Շենիր, 291-294, Աթկիրիա, 318-324. Մարգուան, Ամասիա, 337-341. Եւդոկիա, Կոմամա, Սերաստիա, 395-399:*
- 12 ԱԾՐՊԵՏ, *Տեղագրութիւնն Խոտորդոյ, «Բազմավէպ» 1875, 225-229, 333-337. Ինչպէս նաև՝ 1876, 193-198. 1932, 24-29:*
- 13 Տե՛ս Հեղինակի «Բազմավէպի» էջերում հրատարակուած հետեւեալ յօդուածները՝ Վամայ Շովակի կողիները-Աղթամար, 1897, 150, 203, 380, 411, 515. Ինչպէս նաև՝ 1899, 69-73 (Ագուլիս), 118-124 (Ազդոր կամ Ազգիրը), 168-171 (Ալեքսանդրապոլ), 230-235, 269-272 (Ախալցխա), 302-312 (Ախալքալաք), 360-365 (Ակբ), 401-405 (Ակոռի), 452-459 (Ամասիա), 497-502 (Այրարատ) եւ այլ բազմաթիւ տեղագրութիւնները:
- 14 ԼինԶ, Հ., *Աղեքսանդրապոլ, «Բազմավէպ» 1902, 33-38: Երեւան, 78-83: Էջմիածին, 122-127 եւ 170-174: Կարս, 236-242: Աթի, 370-377 եւ 428-432 եւ այլ:*

դուածը<sup>15</sup>, Բազրատ Գիւլխասեանի «Հայկական քարանձաւային բնակվայրերն ու դրանց ներքին յարդարանքը»<sup>16</sup>, Բաբկէն Առաքելեանի «Գառնիի եւ Դուիմի պեղումները»<sup>17</sup>, Յովսէփ Ալեքսիսի Արաքեկիրին նույիրուած շարքը<sup>18</sup>, Հ. Մեսրոպ Ճանաշեանի «Արմավիր քաղաքի ծագումը»<sup>19</sup>, Համեթ Մարտիրոսեանի «Սիսիան, Զօրաց քարեր, ցից քարեր, Քարահունց»<sup>20</sup>, Դաւիթ Քերթմեննեանի «Միջնադարեան Հայաստանի առեւտրահասարակական կեդրումների քաղաքաշինական եւ ճարտարապետական առանձնայատկութիւնները»<sup>21</sup> եւ այլն:

### ԲԵՐԴԱՇԻՆՈՒԹԻՒՆ

«Բազմավեպ»ում հրատարակուած ուսումնասիրութիւնների երկրորդ մասը՝ Հայկական պատմական նահանգների փաստագրութեանը մաս կազմող Հայկական բերդաշինութիւնն է: Այս բնագավառում՝ իրենց հետքը թողեցին բժիշկ Յարութիւն Տէր-Ղազարեանն ու Հ. Միքայէլ Յովհաննէսեանը: Յ. Տէր-Ղազարեանի բնագաւառը կիլիկիայի բերդերն են, ինչպէս նաեւ վանքերը<sup>22</sup>: Մինչդեռ Հ. Մ. Յովհաննէսեանը Հայկական ուսումնասիրութիւնների անդաստանում թողեց երկու կարեւոր աշխատութիւն: Մէկը կենտրոնական Հայաստանի բերդերն են, միւսը՝ կիլիկիայի բերդերը: Երկու արժէքաւոր աշխատութիւններն էլ մինչեւ գիրք դառնալը, որոշ մասերով պարբերաբար հրատարակուեցին «Բազմավեպ»ի էջերում եւ իրենց վրայ անմիջական ազդեցութիւնը կրեցին վերեւում նշուած անուանի տեղագիրների գործերի<sup>23</sup>:

15 ՄԱԲԻ, Ն., «Անի՝ Հին Հայաստանի մայրամագքը՝ պատմահնագիտական հետազոտութիւն», «Բազմավեպ» 1899, 73-76 և 503-509:

16 «Բազմավեպ» 2013, 195-208:

17 Անդ, 1962, 82-101:

18 Անդ, 1958 թ. գանձագն համարներում:

19 Անդ, 1945 թ. գանձագն համարներում:

20 Անդ, 2014, 271-300:

21 Անդ, 1985, 106-127:

22 Տէր ՂԱԶԱՐԵԱՆ, Յ., Կոռիկոսի բերդերը, «Բազմավեպ» 1947, 224-240: Նոյնի, Ծովք եւ Ծով-Դղեակ, «Բազմավեպ» 1948, 105-118: Նոյնի, Կոպիտառ բերդը, «Բազմավեպ» 1948, 257-260: Նոյնի, Թերդուս, «Բազմավեպ» 1949, 81-84:

23 ՅՈՎԱԿԱՆՆԷՍՆԵՆ, Հ. Մ., Հայաստանի բերդերը, «Բազմավեպ» 1954, 88-92, 181-186: 1959, 29-35: 1960, 178-181: 1961, 65-69 և 200-203: 1962, 117-128: 243-247: 1963, 111-122: 255-260: 1964, 249-252: 1969, 302-306: 1970, 32-44: 1976, 126-135:

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

«Բազմավեպ»ում լրյս տեսած ճարտարապետութեան ժառանգութեան ուսումնասիրութեան առաջին յուշարձանը Աղթամարի տաճարն է<sup>24</sup>, ինչպէս նաեւ նրան նախորդող եւ յաջորդող Անի քաղաքի անկրկնելի կոթողները՝ Մայր տաճարը, Գագկաչնը, Աբուղամբենց Սբ. Գրիգորը, Սբ. Գրիգիչը, Առաքելոցը, Կուսանաց վանքը, Տիգրան Հոնենցի եկեղեցին, Անիի պալատները եւ այլք: Բնականաբար հայկական ճարտարապետութեան ժառանգութիւնը իր լաւագոյն օրինակներով ընդգրկուած էր տեղագրական աշխատութիւններում: Կան եւ առանձին հեղինակների հետազօտութիւններ եւ ընդհանրացնող ակնարկներ, ինչպէս Հ. Վարդան Հացունիի «Կուսաստանք Հայաստանի մեջ», ուսումնասիրութիւնը<sup>25</sup>, Կ. Պասմանեանի «Անիի անցեալն ու ներկան»<sup>26</sup>, Հ. Մեսրոպ Արք. Տէր Մովսիսեանի «Հայկական երեք վանենիքի» Տաքեւ, Հաղպարծին և. Դադի եկեղեցիները եւ վանկան շինութիւնները<sup>27</sup>: Տուեալ շարքը «Բազմավեպ»ում լրացնուած է Յ. Տէր Ղազարեանի Կիլիկիայի վանքերին նույրուած յօդուածաշարը<sup>28</sup>, ինչպէս նաեւ այլ բազմաթիւ նիւթեր<sup>29</sup>: Ճարտարապետութեան փաստագրական նիւթերի մէջ ուշագրաւ աշխատութիւնն է Արևանեան Գէղորդ Արքեպիսկոպոսի «Պատառիկներ լուսածիր շարաբացեալ վանենիքն» յօդուածաշարը<sup>30</sup>: Թեման, որքան էլ որոշ դրոյթներով արտացոլուած է Հ. Համա-

24 Թովմայի Արծրունույ յաղագս շինութեամ Աղթամարայ, եւ ո՞յք ումամբ յառաջ չափ գծենակալն Արքայի (Գագկայ) սուր եւ ոչ արժամի իմշ յիշառակի ի մնաց գործք գործեցին, «Բազմավեպ» 1856, 91, ինչպէս նաև՝ Թովմայի Արծրունույ յաղագս գերապեսայժառ եւ պանծալի սուրը եկեղեցւոյն որ յլդրամը հաղաքի, «Բազմավեպ» 1856, 123:

25 «Բազմավեպ» 1923, 12-17, 43-48, 72-78, 107-116:

26 Անդ, 1923, 262-266, 304-308:

27 Անդ, 1939, 52-58:

28 Տէր ՂԱԶԱՐԵԱՆ, Յ., Կիլիկեան վանենիք, «Բազմավեպ» 1952, 87-90: 119-121: 169-171: 242-243: 1953, 148-149: 1954, 125-145: ԱՐՍԻՆ ԵՐԿԱԹ, Արքակաղին եւ Ակմետը պատմերը, «Բազմավեպ» 1958, 258-278:

29 ՊերՊէրԵԱՆ, Հ., Մուրատ Դ.ի անցքը Սերաստիայէն եւ Ս. Սարգսի եկեղեցւոյ նորոգութիւնն ու ընդարձակումը 1635, «Բազմավեպ» 1960, 13-17: ԿԱՐԱԽԵԱՆԵԱՆ, Գ., Հայստամի Քարեղարի նոր Քարեղարի եւ պղճիք դարի յուշարձանների պեղումները, 1969, 124-129: ԵԱՐՏԸՆԵԱՆ, Հ. Տ., Քեսունի կարմիք վանենիք, 1975, 299-323: ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ, Ս., Հովհիկ եկեղեցին, 1978, 357-381: ՊԵՏՐՈՍԵԱՆ, Ա., Երեւամի Պողոս-Պետրոս եկեղեցին եւ Բրա որմանակարմերը, 1993, 203-220: ԳԱՍՊԱՐԵԱՆ, Հ., Նորավամիք ճարտարապետական համալիրը, 1993, 119-132:

30 Տէ՛ս «Բազմավեպ» 1933, 166-170. 1934, 177-181, 300-304, 431-440. 1935, 139-142: 1936, 37-44. 1937, 297-305. 1938, 277-292. 1939, 228-232:

գասպ Ոսկեանի Հայաստանի վանքերին նուիրուած բազմահատողեակում, այնուամենայնիւ «Բազմավեպ»ի համարներում ներկայացուածը իր ընդգրկողութեամբ նոր է: Այստեղ այն կարեւորում է նրանով, որ թեման հայկական ճարտարապետութեան հրատարակուած գրականութեան մէջ դեռեւս իր պէտք եղած մեկնաբանութիւնը չի ստացել:

Հայկական ճարտարապետութեան ժառանգութեան ուսումնական կազմութեամբ առանձնապէս նորոյթ են վերջին տասնամեակում «Բազմավեպ»ի էջերում լոյս տեսած երեւանի Ճարտարապետութեան եւ շինարարութեան ազգային համալսարանի եւ Միլանոյի փոլիթեքնիքի մեթոսական աշխատութիւնները, ինչպէս՝ իմմա Յարութիւնեանի, Լուսինէ Կարապետեանի, Լիւպա Կիրակոսեանի, Նարինէ Միսիթարեանի եւ Աշոտ Սաֆարեանի, Լորենցոյ Յուրինայի, Գայանէ Նազուխանեանի, Գրիգոր Նալբանդեանի եւ այլոց աշխատութիւնները<sup>31</sup>:

### ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայ ճարտարապետութեան տեսութեան եւ պատմութեան յօդուածները «Բազմավեպ»ի էջերում նոյնապէս իրենց արտացոլումն ունեցան: Այս բնագավառում փայլեցին՝ Հ. Մ. Պոտուրեանը, Հ. Ն. Անդրիկեանը, Հ. Գաբրիէլ Նահապետեանը, ճարտարապէտ Մ. Ճէվահրեանը, Հ. Գաղանճեանը, Մուրատ Հասրաթեանը, Ժան Միշէլ Թիերին, ինչպէս նաև այլ մասնագէտներ:

Մինչեւ անցնելը տեսութեան բնագաւառի ներկայացուցիչներին, սկզբում հարկ է անդրադառնալ հայկական ճարտարապե-

31 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Լ., Պատմահարտարապետական յուշարձանների վերականցման, ամրակայման և վերօքտագործման նախագծերում կոնսուլտի համակարգի հաջուարկման կարեւորութիւնը, «Բազմավեպ» 2014, 60-82: ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Լ., Պատմահարտարապետական յուշարձանների պահպանման և վերականցման գործքների վերաբերյալ Հարարադում, 82-104: ՄԽԻԹԱՐԵԱՆ, Ն. եւ ՍՍՖԱՐԵԱՆ, Ա., Պատմահարտարապետական յուշարձանների բանգարանացումը Հայաստանում, 104-127: ՅՈՒՐԻՆԱՅ, ԼՈՐԵՆՑՈՅ, Հայկական եկեղեցիները ամրակայելու որոշ նորարարական առաջարկներ, 174-189: ՆԱԶԼՈՒԽԱՆԵԱՆ, Գ., Պատմական յուշարձանների վերականցման բնագաւառում ժամանակակից պատմահարտարապետական յուշարձանների վերականցման պատմահարտարապետական յուշարձանները ՀՀ-ում, 189-204: ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, Գ., Հայաստանի պատմահարտարապետական յուշարձանների վերականցման փորձը, 204-227:

**տութեան եկեղեցական շէնքերի ծագումնաբանական հարցին վերաբերող վաղագոյն երկու ուսումնասիրութիւններին:** Առաջինը «Փաւատոս Բիւզանդ կամ սկզբնաւորումն հայկական եկեղեցւոյ» վերնագիրն է կրում<sup>32</sup>, իսկ երկրորդը՝ «Հայաստանի առաջին եկեղեցին»<sup>33</sup>: Երկու յօդուածներն էլ քննական՝ բանասիրական թեքումով են: Վերոյիշեալ հեղինակների կազմում Հ. Մ. Պոտուրեանի յօդուածները եզրաբանական բնոյթ են կրում: Հեղինակի վաղագոյն յօդուածը ընդհանուր է վերոյիշեալ երկու յօդուածների թեմատիկայի հետ<sup>34</sup>: Նկատենք նոյնպէս, որ Հ. Մ. Պոտուրեանի եկեղեցու մասերին վերաբերող յօդուածները սկզբում միջազգային ճարտարապետութեան ենթաժեքստն ունեն եւ յետոյ շարունակւում են հայկական ճարտարապետութեան ենթաժեքստով եւ եկեղեցու մասերի եզրերը դիտարկում են հայկական եկեղեցիների օրինակներով<sup>35</sup>:

Հ. Գ. Նահապետեանի տեսական ուսումնասիրութիւնները «Բազմավիպ»ում սկսեցին տպագրուել 1927ին: Այս թուականով տպագրուած յօդուածը վերնագրուած է «Հայկական նարտարապետութեան վրայ պատմական հետազոտութիւնն»<sup>36</sup>: Ցաջորդաբար՝ 1928ին լոյս է տեսնում հեղինակի միջազգային եւ հայկական ճարտարապետութեան համեմատական զարդացման հարցերին վերաբերող ուսումնասիրութիւնը: Ցօդուածաշարի առաջին մասը վերնագրուած է «Եկեղեցական նարտարապետութիւնը Արևելքում Գ. դարի մէջ»: Ցաջորդը՝ «Եկեղեցական նարտարապետութիւնը Դ. Ժ. դ.Ա. դարերուն»<sup>37</sup>: Հայկական եւ միջնադարեան համբնդհանուր ճարտարապետութեան համեմատական վերլուծութեան առումով կարեւոր է Հ. Գ. Նահապետեանի 1930ական թուերին հրատարակուած, «Բրիստոնէական նարտարապետութիւն» պատմական հետա-

32 ԹՈՐՈՍԵԱՆ, Հ. Յ., Փաւատոս Բիւզանդ կամ սկզբնաւորումն հայոց եկեղեցւոյ, «Բազմավիպ» 1896, 183-189, 193-200, 241-247, 342-347, 433-438, 499, 529-540:

33 ԱՆԴՐԻԿ, Հ. Ն., Հայաստամի առաջին եկեղեցին, «Բազմավիպ» 1904, 196-198:

34 ՊՈՏՈՒՐԵԱՆ, Հ. Մ., Ծագումն Քրիստոնէական ճարտարապետութեան, «Բազմավիպ» 1893, 383-387, 480-485:

35 ՊՈՏՈՒՐԵԱՆ, Հ. Մ., Ճարտարապետութիւն, «Բազմավիպ» 1907, 31-35: Նոյն, Հայկական նարտարապետութիւն, 205-209 և 569-570: Նոյն, Հայկական եկեղեցւոյ Արքնակալութեան, 1908, 230-232: Հմմ, ՀԱՅՐԱԹԵԱՆ, Մ., Հայ նարտարապետութիւն «Բազմավիպի էջերում», «Բազմավիպ», 2001, 203:

36 «Բազմավիպ» 1927, 244-248 և 299-304:

37 Անդ, 1928, 6-12, 40-44, 65-72:

գօտութիւններ» յօդուածաշարը<sup>38</sup>: Այստեղ, սկզբում՝ դիտարկւում են վաղ քրիստոնէական գուգահեռները եւ եկեղեցու ձեւագոյացման հարցերը: Այնուհետեւ ուսումնասիրուում է՝ «Ու՞ր է գմբէքաւոր և կեղեցւյ հայրենիքը» թեման: Ցողուածի միւս մասում նայւում են հայկական ճարտարապետութեան՝ Ասորա-Բաբելական եւ Մարա-Պարսկական փոխազդեցութիւնները: Շարունակելով նիւթը նահապետեանը յաջորդ մասում դիտարկում է՝ «Ինչ օգտուել է Հայաստանը Ասորիքն» թեման: Փաստօրէն եզրայանգումը նպատակամղում է դէպի այն, որ հայկական քրիստոնէական ճարտարապետութեան ակունքները տեղական են եւ ըստ այդմ ուսումնասիրութիւնում պարզաբանում է հայկական ճարտարապետութեան ձեւի եւ բովանդակութեան համապատասխան կազմաւորումն ու տիպագոյացումը:

«Բազմավեպ»ի էջերում արտացոլուած միւս հեղինակը Ս. Ճէվահիրճեանն է: Նա լինելով ճարտարապէտ իր հայկական ճարտարապետութեան վերաբերուող գրոյթներով շարունակում է Ժողվածի Մարչիգովկան տեսակէտները<sup>39</sup>: Նրա գործերից յատկապես կարեւորում են՝ «Հայկական կամարը գոթական ոնին մէջ»<sup>40</sup>, «Սիւնազարդ ծածկոցի դրութիւնը եւ կամարակապ զարդասիւնները հայկական ճարտարապետութեան մէջ»<sup>41</sup>, «Գմբէք քէ լուսամուտ»<sup>42</sup>, յատկապէս՝ «Հայկական միջինադարեան ճարտարապետութեան համաչափական խնդիրները վերլուծող Հայկական ճարտարապետութեան ներդաշնակութեան կանոններու պրատումի փորձեր» յօդուածաշարը<sup>43</sup>, «Պատուհանը հայկական ճարտարապետութեան մէջ»<sup>44</sup>, «Սանդուղը հայկական ճարտարապետութեան մէջ»<sup>45</sup>, «Les Reminiscences de l'architecture Arménienne et occident» (հայկական ճարտարապետութեան նշխարբներ Արեւմուտքի ճարտարապետութեան մէջ)<sup>46</sup>, «Թէոդորիկո-

38 Անդ, 1930, 102-106, 148-152, 210-215, 292-297, 449-454: 1931, 8-13, 102-106, 434-441, 513-526: 1933, 97-105 և 241-246: 1934, 177-181:

39 Ներկայացուած նիւթը հմմտ. ՀԱՅՐԱԹԵԱՆ, Մ., Հայ ճարտարապետութիւնը՝ «Բազմավեպի» էջերում, 2001, 204-207:

40 «Բազմավեպ», 1940, 18-22, 43-47, 112-116, 173-178: 1941, 17-30:

41 Անդ, 1942, 35-45, 1943, 17-25:

42 Անդ, 1946, 302-317:

43 Անդ, 1947, 108-127, 169-173, 227-240: 1948, 22-26, 172-180, 222-229:

44 Անդ, 1952, 55-68:

45 Անդ, 1956, 74-77:

46 Անդ, 1968, 157-197, 268-306:

սի Հուաւեննայի դամբարանին հայկական շինարուեստը» եւ այլն<sup>47</sup>: Նշելու հանգամանք է, որ միջնադարեան ճարտարապետութեան հայկական դասընթացներում կարողինգեան եւ ֆրանկների ճարտարապետութեան բաժնում ներդրուած յօդուածներ են Ս. Ճէվահիքնեանի հայկական եւ նախառոմանական ճարտարապետութեան բաղդատական ուսուումնասիրութիւնները<sup>48</sup>: Խօսքը վերաբերում է Օրլիանգի Ժերմինէ գ'եպրէ եւ Էջմիածնի տաճարի յատակագծերի սկզբունքային նմանութեանը եւ Միւանի Կապելլա դելա Պիետայի եւ Բագարանի տաճարի յատակագծի, կտրուածքի և ծաւալատարածական լուծումների նմանութեանը:

Ի հարկէ հայկական ճարտարապետութեան տեսութեան եւ պատմութեան հարցերը մեծ վերելք ապրեցին հայ-իտալական համագործակցութեամբ նախաճեռուուած հայ արուեստի նուիրուած միջազգային հինգ գիտաժողովներում: Մինչ այդ եւ յետոյ, ինչպէս նաև Ի. դարի վերջին տասնամեակներին «Բազմավիպ»ի էջերում տեղ գտան հայկական ճարտարապետութեան փոխազդեցութիւնների, տիպաբանական ձեւաւորման, յօրինուածքային վերլուծութեան բազմաթիւ հրատարակութիւնները, ինչպէս Ճուզեփիկ Ֆրասսոնի «Հայկական եւ բիւզանդիկական նարուարապետական փոխառնչութիւնները»<sup>49</sup> եւ «Աղբամարի տաճարի մի բանդակային մանրամասնի շուրջ» յօդուածները<sup>50</sup>: Կարեւոր գործէ Ք Յարութիւն Քիւրտեանի «Խճանկար հայոց մօու» յօդուածալարը<sup>51</sup>: Հայ եւ միջնադարեան փոխազդեցութիւններից կարեւոր են Քորպութի Տոմոքոչի «Հայկական ճարտարապետութեան ազդեցութիւնը Հունգարիոյ առաջին եկեղեցիներուն վրայ»<sup>52</sup>, Ճ. Ենիի «Հայատամի եւ Պալքանեան շրջաններու միջեւ մի քանի շինարարական լուծումներ» յօդուածը<sup>53</sup>: Ինչպէս նաև նոյն հեղինակի «Շբաղու-

47 Անդ, 1980, 231-281:

48 Տե՛ս Բոռում Զենիի խմբագրութեամբ «Արուեստի համագիտարանի» կարդինալան ճարտարապետութեան նուիրուած յօդուածը:

49 FRASSON, J., *L'Architettura Armena e quella di Bizanzio*, «Բազմավիպ» 1939, 234-245:

50 FRASSON, J., *Aghit'amar: Contributo all'interpretazione iconografica della cappella palatina di S. Croce*, «Բազմավիպ» 1987, 287-316:

51 Անդ, 1934, 60- 64, 193-210, 358-387:

52 Անդ, 1967, 273-269:

53 IEINI, G., *Alcune soluzioni costruttive fra Armenia e regione Balcanica*, «Բազմավիպ» 1981, 412-424:

ուերու նարտարապետութիւնը Հայաստանի մեջ ժԳ-ԺԴ դարերուն»<sup>54</sup>: **Քաթարինա Ֆան Լույի** «Մոդիային պատմական հետազոտութիւն մը հայկական միջնադարեան խաչքարերու մասին»<sup>55</sup>: Այս շարքում են նաև հայկական ճարտարապետութեան ճանաչուած հետազոտողներ Ժ. Մ. Թիերիի եւ Մ. Հասրաթեանի մի քանի ուսումնասիրութիւնները<sup>56</sup>: Տեսական կարեւոր գրոյթներ կան «Բազմավէպի» մի շարք հարտարակութիւններուն, դրանց կարեւորագոյներից են՝ Գաբրիէլլա Ուլուհոձեանի «Երևմիա Զելեպի Քեօմուրնեանի կորսուած «Աշխարհագրութիւնը» Պոլոնիայի մէջ»<sup>57</sup>: Գրիստին Շայլոյի «Նվարներու եւ սրբապատկերներու գործածութիւնը հայ եկեղեցւոյ մէջ»<sup>58</sup>: Հ. Տաճատ Եարտըմեանի «Անապատ» եւ «վանք» եզրերու բովանդակային-իմաստային նշանակութիւնը հայ վանական մտածողութեան մէջ»<sup>59</sup>: Գրիգոր Գրիգորեանի «Գառնահովիտի բառանիստ կոթողի պատկանելութեան խնդիրը (հեքանոսական թէ քրիստոնեական)»<sup>60</sup>: Լալա Գոմինենո Մարիա Ատելայիդէի «Հայկական ճարտարապետական զարդանախշերը մոնղոլական շրջանին»<sup>61</sup> (իստալէրէն): Գրիգորեան Աշոտի «Բնապաշտական եւ խորհրդանշական ընկալումների դսեւորումները Հ. Ղ. Ալիշանի երկերում»<sup>62</sup>

54 IENI, G., L'Architettura dei portali in Armenia durante il XIII-XIV secolo, 1982, 387-396:

55 VAN LOO, K., Motivgeschichtliche Untersuchung des Mittelalterlichen Armenischen Kreuzsteins, «Բազմավէպ» 1984, 92-118:

56 Թիւթի, Ժ. Մ., Ամկիւմախորշերով բառաքեւ տիպի կառուցուածքները (տիպարանական ուսումնասիրութիւն մը այսրկավասեան եկեղեցիներու խումքի մէջ), «Բազմավէպ» 1980, 124-231 (Քրանսերէն): ՀԱՄՍԹԵԱՆ, Մ., Ուղամիկին սրբարանով հայկական եկեղեցիներու ճարտարապետութիւնը, «Բազմավէպ» 1982, 181-189 (Քրանսերէն): Թիւթի, Ժ. Մ., Հայկական հմարոյք գմբէքաւոր սրաներ, «Բազմավէպ» 1985, 61-106 (Քրանսերէն): ՀԱՄՍԹԵԱՆ, Մ., Հայկական ճարտարապետութիւնը եւ պատմաշխարհագրական ժողովրդական ժողովրդական գործոմեները, «Բազմավէպ» 2002, 220-236 (Քրանսերէն):

57 ULUHOGIAN, G., È a Bologna la perduta “Geografia” di Eremia Celebi K’eo-miwrcean, «Բազմավէպ» 1994, 361-378:

58 CHAILOT, C., De l’usage des images et icons dans l’église Arménienne, «Բազմավէպ», 1993, 122- 145:

59 «Բազմավէպ», 1998, 32-60:

60 Անդ, 2007, 164-189:

61 LALA COMNENO, M. A., La Decorazione Architettonica Armena del periodo mongolo, «Բազմավէպ» 2010, 581-597:

62 «Բազմավէպ» 2014, 15-31:

**Եւ այլք:** Տեսութեան եւ պատմութեան առումով ուսումնասիրական կամ արուեստի քննադատութեան տեսանկիւնից կարեւորում է Մ. Հասրաթեանի «Հայ միջնադարեան ճարտարապետութեան հիմնահարցերը «Բազմավիշի» էջերում» յօդուածը<sup>63</sup>: Հեղինակը յետադարձ հայեացքով՝ քննականօրէն վերանայում է, «Բազմավիշ»ում հրատարակուած մի շարք ճարտարապետութեան պատմաբանների վերլուծութիւնները եւ հայկական ճարտարապետութեան մասին նրանց կողմից կատարուած մէկնաբանութիւնները: Բնականաբար հայկական ճարտարապետութեան նուաճումների տուեալ համեմատական վերլուծութիւնը արդիական է եւ այն քննականօրէն մեկնաբանում է «Բազմավիշ»ում հրատարակուած հայկական ճարտարապետութեան մասին բարձրացուած գիտական տեսակէտները:

#### ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐ – ԿԵՆՍՍԳՐԱԿԱՆՆԵՐ – ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Հայկական գաղթավայրերի նիւթերը, հայ ճարտարապետների ստեղծագործական կենսագրականները, եւ հայկական ճարտարապետութեան հրատարակութիւնների գրախօսականները «Բազմավիշ»ի էջերում կազմում են մեր ուշադրութեան վերջին կէտը:

Շահեկան են «Բազմավիշ»ի էջերում արտացոլուած հայկական գաղթօջախների, հայկական ճարտարապետութեան երախտաւորների եւ հայկական ճարտարապետութեան վերաբերեալ հըրատարակութիւնների բազմատասնեակ գրախօսականները: Բնագաւառի աշխոյժ համագործակիցներ են յատկապէս Յարութիւն Քիւրտեանը<sup>64</sup>, Հ. Յարութիւն Պղտիկեանը եւ շատ ուրիշներ: Ի-

63 ՀԱՄՐԱԹԵԱՆ, Մ., Հայ միջնադարեան ճարտարապետութեան հիմնահարցերը «Բազմավիշ» էջերում, «Բազմավիշ» 2001, 201-211:

64 «Բազմավիշ»՝ ՔԻՒՐՏԵԱՆ, Յ., Հիմնամապահորդքի Հայու - Մարքո Փոլու Հայաստանի մէջ եւ իր վկայութիւնները հայերի մասին, 1930, 315-318: Նոյնի, Հիմնամապահորդքի Հայու - Բելլի ուղեգրութիւնը 1715 թ., 1931, 205-208: Նոյնի, Ա. Քալամբարի Հիմնամապահորդքի պեղումները, 1938, 52-53: Նոյնի, Գարեգին Յովսէփեանի «Հաւուց քառի Ամենափրկիչ եւ Առյանուն յուշարամները հայ արուեստի մէջ», 1938, 55-59: Առյանի, Թովման Հերքերը եւ իր ուղեգրութիւնը 1627-1629 թթ. - ծամօթութիւն պարսկահայոց մասին, 1938, 103-108. Նոյնի, Յուրգիս Պալտրուշայմիսի «Etudes sur L'Art Médiéval en Géorgie et en Arménie» գրքի մասին, 1947, 46-47: Նոյնի, Արշակ Ալպյոսինամի Պատմութիւն հայ կեսարիոյ գրքի մասին, 1948, 129-141: Նոյնի, Արտաշէս Գարտաշեամի «Նիւթեր Եղիպտոսի հայոց պատմու-

ըոք, որ «Բազմավեպ»ը իր թեւերը տարածեց դէպի մայր հայրենիքն ու հայկական գաղթավայրերը։ Այն իր ազգային եւ միջազգային գիտական շտեմարաններով մատչելի դարձաւ այնտեղ, որտեղ բնակւում է հայը։ «Բազմավեպ»ի էջերում ուսումնասիրուեցին հայկական գաղթավայրերի վիճակագրութիւնը եւ շինարարական գործունէկութիւնը իրենց բոլոր մանրամասնութիւններով, որոնք հիմքը դրեցին հայկական իրականութեան սփիւռքահայ ճարտարապետական ստեղծագործութիւնների տարեգրութեան շարադրմանը։ Այդ նիւթերը բազմազան են, նրանք ե՛ւ վիճակագրական բնոյթ ունեն, ե՛ւ քաղաքաշինական-նկարագրական ե՛ւ գաղթավայրերի յուշարձանագիտական<sup>65</sup>։ Հէնց այս նպատակներով «Բազմավեպ»ի կարեւոր էջերից են, ոչ միայն նրա ստեղծողների կենսագրականները, այլ եւ հայրենիքն ու գաղթօջախների յայտնի ճարտարապետների ու հետազոտողների՝ Վիկտոր Լանգլուայի, Թորոս Թորամաննեանի, Նիկողայոս Մառի, Ժոզեֆ Ստրչիգովսկու, Գարեգին Ցովսէփեանի, Մեսրոպ Սեթեանի եւ այլոց վերաբերեալ նիւթերը։

\* \* \*

«Բազմավեպ»ի էջերում իրենց անդրագարձը գտան հայկական ճարտարապետութեան բազմաթիւ ճանաչողական նիւթեր եւ դրանց մեկնաբանութիւնները։ Այդ գործերի կարկառուն դէմքե-

թեամ» (Գահիրէ, 1943) գրքի մասին, 1948, 47-48: Նոյնի, Կարո Ղաֆադարեամի հեղինակած՝ «Դուրս Քաղաքը եւ Արքա պեղումները» (1960), «Սահմանի վանք եւ Յովհաննավանք» (1964), «Հաղպատի վանք» (1964) աշխատութեամբ մասին։ Նոյնի՝ Ս. Բարխուդարեամի հեղինակած «Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ Քարագործ վարպետներ», Երևան 1963։

65 ԳՈՒՇՆԵՐԵԱՆ, Գ., Ուսուագնացութիւն առ Տիրամայր Հայոց ի Կամեմից Փոտորեան, «Բազմավեպ», 1885, 24-32, 97-108, 193-200: Նոյն, Ճամապարհորդութիւն ի Թէղոսիոյ դէպի ի Խոր-Նախշենամ, 1886, 281-286 եւ 1887, 5-304: Նոյն, Արթէշ գետ Քաղաք եւ եկեղեցի ի Խումենիա, 1888, 211-329: ԱԼԻՇԱՆ, Ղ., Հայ - Վեհես, 1890, 305-312, 337-344, 369-376. 1891, 3-8, 17-24, 33-38. 1892, 10-14, 104-108, 142-150: Նոյն, Աշխարհաշէմ գործունէութիւն Հայոց ի Կափա, 1892, 26-30, 97-101. Նոյն, Պատմութիւն Կափայի. Վերափոխման եկեղեցին, 1892, 214-220: Նոյն, Սոսրագրութիւն Նախշենամու, 1892, 109-116, 145-150, 157-164, 193-203, 220-222, 261-266: ԼՈԹԻ, Պ., Հայոց վանք Երուսաղէմայ, 1903, 23-27. ԴՐՍՑԻ, Նոր Ջուղա, 1904, 233-236 եւ 360-369:

ըլից եղան բազմաթիւ մտաւորականներ, Միսիթարեան գիտնական հայրեր եւ ՀՀնց «Բազմավեպ»ի խմբագիրները: Նրանք հայաշունչ գործունէութեամբ կառուցողաբար համագործակցեցին հայրենիքի հետ եւ ներդրուեցին հայկական սփիւռքի գոյատեւման ու զարգացման առաքելութիւնում: Իրականում եթէ ակնարկուող բոլոր աշխատութիւնները բարեխղճութեամբ յղելու լինենք՝ պէտք է կրկնապատկել ներկայացուած յօդուածի էջերը: Այսու նպատակայարմար է «Բազմավեպ»ում հրատարակուած նիւթերը՝ հայկական ճարտարապետութեան տեսութեան մէջ դասակարգել հետեւեալ բնագաւառներով՝ ա) տեղագրական-լանտշաֆտ-քաղաքաշինական, բ) բերդաշինական, գ) յուշարձանների փաստագրական վերլուծութիւն, դ) ճարտարապետութեան տեսութիւն եւ պատմութիւն, ե) սփիւռքահայ ճարտարապետութիւն, զ) Հայագիտական գրքերի գրախոսութիւն, է) հայկական ճարտարապետութեան երախտաւորների ստեղծագործական կենսագրութիւններ:

ԴԱՒԻԹ ԳԵՐԹՄԵՆՃԵԱՆ

### **Summary**

## **MATERIALS OF ARMENIAN ARCHITECTURE IN THE PAGES OF “BAZMAVEB” PERIODICAL**

**DAVIT KERTMENJIAN**

As a component of Armenian Architectural theory, in the article presented a brief survey of the architectural studies printed in “Bazmavep” periodical within last 175 years. This study carried out in two phases. At first chronologically fixed the abovementioned articles, then, comparatively they classified into following fields of architectural activities.

- a) Topography of Armenian landscape and settlements.
- b) Fortification and combat architecture issues.
- c) Documentation and analytical study of Architectural Monuments.
- d) Theory & History of Armenian Architecture.
- e) Materials of Armenian Diaspora Architecture.
- f) Critical observe of recent publications about Armenian Architecture.
- g) A selected biography of scholars of Armenian Architecture.